

փում է ծորէսին: Պահպանողականները և սոցիալիստները վազում են դէպի ամբիօնը. կռիւը դառնում է ընդհանուր: Իրիսոն, անգոր լինելով կարգը վերականգնել, վեր է կենում, յայտնելով թէ ինքն կը տեղեկացնի ընդհանուր պրօկուրօրին: (Մեծ յուզմունք):

Նրբ Իրիսոն թողեց նախագահական բաղկաւորութիւնը և ընդհարումը, ըստ երևոյթին, աւելի ծանր ընտանոթութիւն ստացաւ, պատգամաւորներ ժողովի կուտարներում երկաց զինւորներին մի վաշտ առանց զէնքերի, որոնց կանչել էին կլէստօրները. բայց պատգամաւորներէ շատերի բողոքի պատճառով, զինւորները հեռացան: Նրբ նիստը դադարեցրկեց, հրաման արգեց հասարակութեամբ հեռանալ արեւուններէ, ուր մի-մեանց հայոյում էին, իսկ մի քանի ժուրնա-լիստներ մինչև անգամ խփում էին միմեանց: Կուտարներում նոր ընդհարում տեղի ունեցաւ Բէրնի և Իէվլի մէջ: Վերջինս փորձեց թա-նաքանան նետել Բէրնիի դէմը՝ աղաղակելով՝ «Լիբը»: Այդ տեսարանին ներկայ եղող անձինք միջամտեցին այդ գործում և արգելեցին կռիւը: Ասում են, որ ծորէն և Բէրնի սեկունդանտներ են ուղարկել միմեանց: Տրեքուններին հասարակութիւնը ստիպւած էր հեռանալ Բուրբոնեան պալատից և ապաւել մայիների վրա: Նիստը վերջանալուն: Իրիսոնի պահանջի անկումաւ, բոլոր խմբերը հաւաքվեցին՝ քննելու այն հարցը, թէ արդեօք պէտք է վերսկսել այսօր նիստը: Կարծիքները բաժանվեցին. բայց որովհետև մեծա-մասնութիւնը վստահում էր անկարգութիւնների վերսկսելուց, այդ պատճառով Իրիսոն լծուեց չը սկսել նիստը: Այսօր երեկոյան պատգամա-ւորներ ժողովի բերում լծուեց տեղեկացնել ընդհանուր պրօկուրօրին, թէ պատգամաւորների ժողովում մի քանի պատգամաւորներ յանցանք գործեցին: Քննութիւն կը սկսվի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԳԻՐԱՍՈՆԵԱԿԱՆ ԼՈՅՍԻ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ»

Համակրելի ուսու գրող Վլադիմիր Գօլմստրէմ չէ մոռանում հայերին. քրիստոնէական այն մեծ տօնի օրը, երբ բոլոր եկեղեցիներում հնչում են Փրկչի խօսքերը «Կառաւարդութիւն իմ տաւ ձեզ», երբ շատերը, ընկղմված տօների դուստրութեան մէջ՝ մոռացել էին թշուառներին, Գօլմստրէմ, մի արտաբերութիւն յօդուածով, որ կրում է «Քրիստո-նէական լոյսի գործութիւնը» վերնագիրը, կը բեր-նում է հայերին Մարդ-Աստուծոյ խօսքերը՝ «Քա-ջակրկեցէք»:

«Բայց, ասում է նա, Փրկչի այդ պատգամը

հակառակորդ համարէ Գայիանէին: Թշնամի, անհաշտ թշնամի... Այս բախտն է ուզում կոյսի վերաւորված, խաղած սիրտը: Բայց ինչպէս պարզ և մանրամասն է խօսում մայրը: Նա դադար չը գիտէ, կարծես հասկա-ցել է թէ ինչ մտքեր կան իր աղջկայ մէջ և հերքում է նրանց: Ահաբեկված, արնաքամ երկրի ցաւերը լուռներ են կազմում. միթէ ինքը, Գա-լիանէն, չէ տեսնում նրանց, միթէ չը գիտէ որ ինքն էլ մի աղջիկ է միայն: Աստուած այս երկ-րին մի քաջ, երեւել տղամարդ չէ տուել, որ ո-չինչացնէ լուռացած ցաւերը, տղքի կանգնեցնէ արտասուքի մէջ խեղդվող ժողովուրդը: Աս-տուած տուել է մի քեղեցիկ աղջիկ միայն, և ինչ կարող է անել մի աղջիկը: Նրան չեն հար-ցնի թէ ինչ է ուզում, նրան կը տանեն, կը խայտառակեն և նոյն իսկ այդ զէպքում էլ ոչ ոք ձայն չի հանի... Միթէ չէ յիշում Գայիանէն որ այս երկրում բոլոր աղջիկները Նազլուններ են, Մարգարիտներ են: Տարան հարկերներին, կը տանեն և մէկին, որ ամենքի թագն ու պսակն է: Եւ մայրը, մայրը... Նա չի գիմանայ, նա կը խեղդվի...:

Իրողութիւններ են դրանք և յանկարծ լուա-ւորեցին Գայիանէի միտքը: Նա հասկացաւ որ այժմ է ինքը միանում իր անթիւ գոթախո քո-րերի հետ: Ինչու հասկացնել զազաններին, ին-չու թշնամի համարվելու բախտը վայելել մե-նակ: Այս երկնքի տակ ծնված բոլոր աղջիկները մի և նոյն են: Միթէ ինքը չէր, որ ուզում էր զրանցից մէկը լինել առանց արտօնութիւնների, առանց պաշտպանների... Եւ ընդհատելով իր խեղճ մօր աղաչանքները, նա առայ մի սոսկալի հանգստութեամբ:

—Միթէ լուսական չեմ ես, որ դեռ ընծայ էլ է ուզում...:

Մայրը կանգ առաւ և սկսեց աղաչել, որ նա բացատրէ այդ խօսքերը: Գայիանէն կրկնեց նոյն հարցը: Անտանելին այն էր, որ նա այժմ յուզ-

խաւարել է մեր յիշողութեան մէջ. կարծացել են մարդկային սրտերը... Այժմ, XX դարի չէմ-քում, Աստուածային Մանուկի ծննդից երկու հա-զար տարի անցած, նորից քրիստոնէութեան օրօ-րացը, Փոքր-Արիան, գրաւեց մեր ուշադրութիւ-նը, և այս անգամ քրիստոնէութեան անօրինակ հոգեւորութիւն—հայերի սպանութեամբ: Բայց մեր սրտերը մեռած էին: Ահա երկու տարի է հա-մակրութեան ոչ մի արձագանք, ոչ մի հոգեկան շարժում, օգնութեան ոչ մի փորձ. մենք, քրիս-տոնեաներս, մոռացել ենք Քրիստոսին: Ո՛հ, որ տեղ գտնել այն խօսքը, որ արթնացնի սրտերը, զորի նրան դէպի գիտակցութիւն, թէ քրիս-տոնեայ անունը պարտաւորութիւն դնող ա-նուն է: Ամեն բան մեռած է... հանգել է... Բայց, կենդանի է Քրիստոս: Նա մշտապէս յա-րութիւն է առնում մեր սրտերում... Քրիստո-նէական լոյսի գործութիւնը երբեք չէ անդհու-առաժի համաձայն թէ լեկինք և երկիր անցնեն և բանք իմ մի անցանկեցին»:

Եւ մի քանի անգամ յուսահատված Գօլմստրէմ լցվում է օգնութեամբ, տեսնելով որ կարող է ասել, թէ, այս, դեռ չէ հանգել քրիստոնէական լոյսը մարդկանց սրտերում, քանի որ կան այն-պիսի մարդասէր ընկերութիւններ, ինչպէս «Քա-րեկաններ ընկերութիւն» անունով անգլիական հաստատութիւնը և այնպիսի անհուռէր անձինք, ինչպէս շարքիս ամուսնիները, որոնք քարոզեցին Փոքր-Արիայի ստուապեալ հայերին խաղաղու-թեան, ողորմածութեան և քրիստոնէական սիրոյ աւետարանը:

Կէմբրիջի համալսարանի պրօֆէսոր Բէնդէլ շարքիսի և նրա կնոջ՝ միստրիս Զէլլէն շարքիսի ճանապարհորդութիւնը, որ կատարվեց Հայաս-տանում կոտորածներից յետոյ և որի նկարագ-րութիւնը հրատարակեց առանձին «Նամակներ Հայաստանից» վերնագրով մանրամասնօրէն յայտնի է արդէն «Մշակի» ընթերցողներին: Սա-կայն այդ նկարագրութիւնը այնպիսի սարսափելի էջեր է պարունակում, այնքան առատ նիւթ է մատակարարում թիւրքաց գաղանթութիւնների ամբողջ դժոխային մեքենայութիւնները բնորո-շելու համար, որ նոյն իսկ ամենաթերահաւատ-նեղ և կատաղի թիւրքամոլները պէտք է լուին: Եւ այդ թերահաւատներին համոզելու ու քրիստո-նէական կարծրացած սրտերը մի քիչ յուզելու, ըմբօցած գզացումները արթնացնելու համար է, որ Վլադիմիր Գօլմստրէմ «Пет. Вѣдомости» լրագրում մի անգամ լայնաբերան է նուի-րում շարքիս ամուսնիներին աշխատութեան: Ան-կարող լինելով առաջ բերել սոսկալի փաստերը, մենք հրաւիրում ենք ընթերցողներին կարգա-լի յօդուածը և վերջացնում ենք, կրկնելով Գօլմստրէմի հետ շարքիսի խօսքերը. «քաջա-

ված չէր, ինչպէս կէս ժամ առաջ, երբ յանդի-մանում էր Օնանին. կարծես փոխվել էր ժամա-ցինները ինչ ուղում են՝ ասելու, թող կոտորի մեր անունը, սրանից աւելի սև օր չի լինի...:

—Իսկ... յօժար ես, հարցրեց նա անգլին դը-ժուարութեամբ:

—Ո՛հ: Բայց նա ուղում է... Կարող ես ընդ-գիմանալ...:

—Փախիր...:

Մայր ու աղջիկ նորից անջատվեցան միմեան-ցից: Գարձեալ յամառ է աղջիկը, դարձեալ մայ-րը չէ հասկանում նրան:

—Փախելը ազատվել չէ, պատասխանում է Գայիանէն.—գալի բերանից փախչողը արջի բե-րանն է ընկնում...:

—Գնա Տոլ, քեռու մօտ...:

—Ի՛նչ օգուտ, թիւրքի ձեռքը այնտեղին էլ կը հասնէ: Քեռու կարող է ընդդիմանալ. եթէ կարողանայ, այստեղ էլ կընդդիմանայ:

Դա ճիշդ էր: Աննա-խաթունը համարեա բոլո-րովին կարել էր յօշոթ իր եղբորից: Մէլքե Աւա-նը, ճիշդ է, ոչինչ անել չէ կարող, նա ինքն է ասում որ չէ կարող: Վերջին ժամանակ նա բո-լորովին թաղվել է մաշլ յուսահատութեան մէջ, անդադար ճանապարհորդում էր, իրողում է, անկանջ է դնում, բայց լուռ ու խուլ է մը-նում, և ո՞վ գիտէ, գուցէ նա չը զարմանայ, երբ լսէ որ Միւլէյման-բէկը տանում է Գայիանէին: Ո՛հ, միայն մի եւք կայ և դա—կոյս Զեդինէի ա-ռաջարկած միջոցն է:

—Դու աղջիկ չը պիտի մնաս, չնչայց մայրը, նայելով իր չորս կողմը ինքն իրանից զվզելով- և երբ տեսաւ որ իրանց լսող չը կայ, շարունա-կեց.—ան, հասկացիր, Գայիանէ, քանի որ դու աղջիկ կը մնաս և այն էլ աղատ աղջիկ, քո գի-նը շատ մեծ կը լինի այդ անօրէնների աչքում: Հասկացիր որ դու նշանված ես: Աստուած մի լաւ ճանապարհ է պատրաստել որ փախչես, ա-ղատվես: Փորձված, խելօք կրիկ է կոյս Զեդինէն.

և երկեցէք, որովհետև Քրիստոս յաղթեց աշ-խարհին»:

Հ. Ա.

ԷՄԻՆ ԶՈՒԱՅԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻՓՈՎ

Անկարելի է առանց հիացմունքի կարգաւ է-միլ Զօլայի նամակը, որ մեծ վիպասանն ուղղել է հանրապետութեան նախագահի հասցէին: Ի՛նչ է այդ նամակի նպատակը.—մղադրելով երկրի բարձրագոյն զինւորական դատարանը՝ իր բոլոր ստորաբաժանումներով՝ վերականգնել ճշմար-տութիւնը... Մինչդեռ Ֆրանսիայի պաշտօնական հինարկութիւնները Վրէյֆուսի գործի (գուցէ և ուրիշ շատ այդ տեսակ գործերի) վերաբերու-թեամբ ամեն կերպ աշխատում են լինել ոչ այնքան արդարադատ և ճշմարտասէր, որքան յարմարվող ժամանակի և հանգամանքների պա-հանքներին,—յանկարծ գլուխ է բարձրացնում Ֆրանսիայի ազնիւ զաւակները մէկը, մի տարօ-րինակ հանձարի ու խեղճ տէր մարդ, որ չէ ու-ղում համաձայնել երկրում տիրող իշխանական մարմիններին յատուկ կարծիքների հետ, և իր գրչի վրա յոյս դնելով՝ բողոքում է զինւորական դատարանի դէմ և հրապարակով մեղադրում ամ-բողջ զինւորական ատենը ամենամանր յան-ցանքների մէջ... Մղադրելով մի ամբողջ շարք բարձրատիճան պաշտօնեաների, որ նրանք Վրէյ-ֆուսի գործի մէջ չեն պաշտպանել ճշմարտու-թիւնը և կամայ թէ ակամայ պատճառ են դար-ձել մի անմեղ մարդու՝ Վրէյֆուսի կորստեան, Զօլա հրապարակով դատել է ենթարկում իրան, և պատրաստ է իր կեանքի գնով պաշտպանել իր յայտնած մեղադրական կարծիքները: Այլ խօսքերով Զօլա մենամարտութեան է հրաւիրում Ֆրանսիայի ամբողջ զինւորական շտաբը, կամ՝ որ մի և նոյն է, ամբողջ զինւորական Ֆրան-սիային: Զօլայի գցած ձեռնոցը իսկոյն բարձ-րացրեց զինւորական Ֆրանսիան և ինչ կը լինի մենամարտութեան հետեանքը՝ չուտով կիմացվի կաշովի արդեօք մեծ վիպասանին խայտառա-կել ամբողջ աշխարհի առաջ իր հայրենիքի երե-սին սև բիժ քողո պաշտօնեաներին... թէ նրա հօդօր ձայնը նոյնպէս կը խեղդվի և չէ կարող մերկացնել ճշմարտութիւնը: Ինչ էլ որ լինի դրա հետեանքը, սակայն Զօլայի արած հերոսա-կան քայլը կը մնայ Ֆրանսիայի պատմութեան մէջ, որպէս մի փառելի և խրատական օրինակ այժմեան և ապագայ սերունդների համար:

Իր նամակի վերջում Զօլա հետեալ նշանա-ւոր խօսքերն է ասում. «Այս քայլը, որ ես ա-նում եմ, մի յեղափոխական միջոց է, որի նպա-տակն է արագացնել ճշմարտութեան և արդա-րութեան բռնկումը»: Ծանր և յուսահատեցնող տպաւորութիւն են անում այս խօսքերը. ծանր է,

չը լսեցինք, նա իւրովեց մեղանից: Պէտք է կան-չել նրան, ես այժմ համաձայն եմ: Թող խաչնե-ցիններ ինչ ուղում են՝ ասելու, թող կոտորի մեր անունը, սրանից աւելի սև օր չի լինի...:

Այդ վիշտը պակաս չէ տանջում մէլքի կնո-ջը: Զոհել առնալին հպարտութիւնը, գցել Մե-լքե-Յուսէֆին անունը, խաչնում խօսքի առար-կայ դառնալ... Բայց ինչ արած. թող մի ուրիշը լինի իր տեղը, երկու կրակի մէջ, տեսնեք ինչ ճար կը գտնէ: Քնք ճիտեղ սրբին, ձեռք վերց-նել ամեն ինչից՝ միայն աղջկան աղատելու հա-մար... ո՞վ կը դատապարտէ այսպիսի մօրը: Ո՛հ, թող տանին, թող նոյն իսկ փախանեմ...:

—Իսկ ես աղջիկ մնալ եմ ուղում, մայր, մի վարանդեցի աղջիկ: Ես ոչ ոքից լաւ չեմ և ոչ ոք պարտաւոր չէ մտածել, որ ես մենակ աղա-վան, լինեմ մի հատիկ բախտաւորը այս դժբախ-տութիւնների մէջ: Այստեղ եմ ես, ձեռքներից մէկը: Փախելը մեծ ամօթ կը լինի Մէլքե-Յուսէֆին աղջկայ համար: Եւ ոչ ոք չի համար-ձակվի փախնել նրան:

Նրա աչքերը լի են հպարտութեամբ, ձայնը չէ դողում, ամուր և անխախտ է նա իր լծա-կանութեան մէջ: Յանկարծ բռնկվում է որդեա-կան սիրտը: Որքան քնքոյն է այդ աղջիկը, երբ խցնում է իր մերձաւորին, որքան սիրում է իր մօրը: Նա մօտ է նստում, բռնում է բազմաշար-չար կնոջ թեք, սեղմում է իր կրծքին, ինչպէս է փայտալուծ: Խեղճ մայրիկ, խեղճ...:

Մայրը հեռու է մնում այդ գգուանքից: Նրա մէջ ծագել է մի դաժան միտք, որ կազմվել է աղջկայ պատասխանից, և այդ միտքը նա չէ կարողանում պահել: Նրա դէմքը պատեց մեռե-լային դուստտութիւնը, խոշոր չրթունքները յան-կարծ անշարժացան, կարծես չորացել էին, տա-պալկվել: Եւ նա, վերջապէս, արտասանում է մի տարբերակ ձայնով փայտացած չրթունքների միջով.

—Նշանակում է... դու ուղում ես թիւրքին...:

այն, համոզվել, որ քաղաքակրթութեան ղեկա-վար համարող Ֆրանսիայում դեռ մինչև հիմա էլ ճշմարտութիւնը և արդարութիւնը պէտք է բռնկեցնել յեղափոխական միջոցներով:

Ե. Ղազ.

ՆԱՄԱԿ ԻԳԻՐԻՑ

Յունկարի 3-ին

Լսում ենք, որ Սուրմալուի գաւառապետը քրդերի հասարակութիւնների տանուտէրներից մէկին,—Համիդ-բէգ Դամադինովին արձակել է դաշտօնից այն պատճառով, որ նա թաղցնելիս է եղել իր հասարակութեան մէջ առաջակ քրդե-րին: Այս լուրը մենք հաղորդում ենք վերապա-հութեամբ, թէպէտ այդ կարգադրութեան մասին տարածված լուրերը հրճուանք են պատճառել Սուրմալուի միւս խաղաղ բնակիչներին:

Մեր «Բը շապկա լէին» յօդուածում ակնար-կել էինք, որ Թիւրքիայի և Սուրմալուի առա-ջակ քրդերի ղեկավարները Որդով գիւղի աղդե-ցիք քրդերն են: Պաշտօնից արձակված Համիդ-բէգը Որդով գիւղի աղդեցիկ և առաջակներն ղեկավարող քրդերից մէկն է: Թէ նրանք իսկա-պէս պահում և ղեկավարում են առաջակներին, իբրեւ ապացոյց կարող ենք տալ հետեալ փաս-տը.—Սուրմալուի ոստիկանութիւնը որոնում է Մարօ անունով մի քուրդ, որը մեղադր-վում է մի ինչ որ քրէական յանցանքի համար, և որին ոստիկանութիւնը պահա-ջում էր Ալիքօչակի հասարակութեան տանու-տէր Հասան աղա Աւդի աղա օղլի Դամադինօ-վից: Անցնալ ամառ, մի օր, Հասան Դամադինօ-վը ասաց իր օգնական, Ասմա գիւղի տանուտէր Մատաֆա Հաջի Նաբօ օղլուն.—«Պօլիցիան պա-հանջում է Մարօյին և յայտնել է, որ նա քո գիւ-ղումն է բնակվում, ուստի դու պէտք է բռնես ու յանձնես ուր հարկն է»: Օգնական Մատաֆան պատասխանեց.—«Մարօյի վրանը խփած է Ղու-րու Կարայում քո վրանի կողքին և երբեք մեր գիւղում չէ ապրել, ինչու դու չես բռնում» և յանձնում պօլիցիային, այլ ինչից են պահա-ջում. որտեղ դու ես, այնտեղ էլ նա է»: «Ես էլ ասում եմ, որ դու տեղեկութիւն ունենաս և երբ պրիստաւը հարցնի՝ ասա, որ քո գիւղում չէ ապրում. իսօ չեմ ասում, որ դու բռնես և յանձ-նես գեաւուրին» (ուստալ կառավարութեան մասին է խօսքը), պատասխանեց Հասան աղա Դամադինով: Կառավարութեան աջակցող հա-սարակական պաշտօնեան ապապէս է աշակ-ցում ուսիկանութեանը առաջակներին արդա-րադատութեանը յանձնելու և անպատկառու-թեամբ զեաւուրը բառով է մկրտում իր կա-ռավարութիւնը. մնացածը ընթիւցողին ենք թողնում դատելու:

Ոչինչ չը շարժվեց, ոչ մի ձայն չը լսվեց իբրեւ պատասխան: Գայիանէն բաց չը թողեց իր դըր-կած թեք, մի նշանով չը հերքեց այդ ծանր ամ-բաստանութիւնը: Զարհուրելի լուսութիւն: Կար-ծես ամեն ինչ քարացել է, որ ցոյց տալ թէ այն, նա չէ սխալվում...:

Եւ Աննա-խաթունն էլ ընկաւ այդ լուսութեան մէջ: Նա, կարծես, հանգստանում էր. աչքերը ուղղեց դէպի երկինք: Կատան-կամաց նրան յարկառակեցին ինչ որ տարբերակ տեսիլներ, թանձր ստուերների թուրթուրին նրա աչքերի ա-ռաջ, երկինքը պոկ եկաւ իր տեղից, թուաւ դէ-պի վեր, կծկվեց, սքանչելի փոքր է նա, ձեռքով կարելի է ծածկել: Սարերը սաստիկ թափով աջ ու ձախ քնացին, յետ են մղվում, մանրանում են: Նա մէջքի վրա յետ ու յետ թեքվեց, թու-լացաւ, ընկաւ գորգի վրա: Այժմ ոչինչ չէ երե-ւում. բայց կարծես գետ է հոսում մէլքի բա-կում. ջրերը ցուրտ չեն, եփվում են անդադար և վշում. մեծ գետ է. նա բարձրանում է, երկ-րորդ յարկն է հասնում. ամեն տեղ լցրեց նա: Եւ այդ վշողների մէջ մի խոր անդունդ դէպի ցած է քաշում մէլքի կնոջը: Նա գնում է, թողնելով իր թեք մէկի գրկում: Մէկը սաստիկ ցնցում է նրան, թափահարում է, աշխատում է ուշքի բերել:

—Մի վախիր, մայրիկ, ասում է նա.—Մէլքե-Յուսէֆին աղջիկը չի կոտորի իր հօր անունը. նա գիտէ թէ ինչ կանէ. մի վախիր, մայրիկ, սիրելի, խեղճ մայրիկ...:

Բայց նրա ձայնը տեղ չէ հասնում: Աննա-խա-թունը բոլորովին հանգստացաւ. նրա աչքերը լայն բացվել են, չուռ են եկել սպիտակուցի վրա, կապտած չրթունքները բաց են թողել եր-կու շարք առաջները, որոնք սոսկալի ոյժով սեղմվել են միմեանց...:

(Կը շարունակվի)

Մեր երկիրը առաջադեմներից մաքրելու համար, որոնք կատարելով թշուառութիւն են պատճառում ժողովրդին և արգելք են հանդիսանում երկրի խաղաղ կուլտուրական զարգացմանը, պարտք ենք համարում նրա արեւելքների և ընթացի մասին բոլոր արձանագրել լրագրութեան մէջ, յոսանալով որ նրանից ամենքը կարող են օգտուել: Գով. խօսակցական

ՆԱՄԱԿ ԽՐԱՊԱՐՈՒԹԱՆ
(Հեռագրով)

Մօսկվա, յունվարի 5-ին
Հանդուգնալ Գրիգոր Արծրունու գաղափարներին համակրողների մի շրջան ողջունում է «Մըշակին», հայոց մամուլի առաջաւոր օրգանին 25-ամեակը, շննկանում ենք այժմ և ետանդ՝ համարձակ և անսպալմաբ կերպով առաջ քաշելու անմոռանալի հիմնադրի նախագծած ուղղութեամբ, որը այժման բարձր պահեց ճշմարտութեան և լայն դրօշակը: Ողջունողները ներկայացնում են խնդրանքներ 100 ռուբլի, որպէս զի նա գրանով ըստ իր հայեցողութեան, 10 օրինակ «Մշակ» ուղարկէ հայոց կարօտ հիմնարկութիւններին: Միմաս կաղաւթանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՐԻՐԻ

Մեզ հաղորդում են, որ վեհախառն կաթողիկոսը մտադիր է Թիֆլիսից գնալ Բագու և մի քանի օր այնտեղ մնալուց յետոյ՝ վերադառնալ Եջմիածին:

Կերակի օր, յունվարի 11-ին, վրաց Հերակի II թագաւորի մահան 100-ամեայ տարեդարձի օրը (1798—1898) Միմի մայր-եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ՝ ի յիշատակ հանգուցեալ թագաւորի, որ թաղված է Մցխեթի տաճարի մէջ: Հոգեհանգիստին ներկայ էին հասարակութեան անդին բազմութեան հետ միասին, Կովկասեան կառավարչապետ իշխան Գալիցին և պաշտօնական շատ նշանաւոր անձինք: Հոգեհանգիստի կարգը կատարեց Վրաստանի եկեղաւր Վաղդիմիր Այդ օրը, վրաց «Իւլիքա» լրագրի ամբողջ համար նուիրված էր հանգուցեալ Հերակի անձին և գործունէութեան: Նոյն օրը լոյս տեսաւ և վրացերէն մի բրօշուր, նոյնպէս նուիրված հանգուցեալին, զարդարված նրա պատկերով: Մտադրութիւն կայ հոգեհանգիստ կատարել և Հերակի գերեզմանի վրա, Մցխեթի տաճարում:

Մեզ հաղորդում են, որ հինգշաբթի, յունվարի 15-ին, վրաց դերասանական խումբը պէտք է ներկայացնի մի նոր կօմիդիա, որ գրել է վրացերէն լեզուով մի հայ օրիորդ: Կօմիդիայի անունն է «Բիւրէլ և խօսակցութիւն»: Ինչ է այդ օրիորդի ազգանունը, առ այժմ յայտնի չէ: Եթիւյի վրա գրած է նրա կեղծ անունը՝ օր. Արեան:

Նորերա Նիւ-Եթրիում լոյս տեսաւ անգլիերէն մի աշխատութիւն, հետեւեալ վերնագրով. «Nip-pur. Explorations and adventures on the Euphrates», աշխատութիւն՝ John Punnett Peters. Ամերիկայի հայոց մի լրագիր այդ գրքի համար ասում է հետեւեալ. «Նիւպուրը հնախոսական կարեւոր հրատարակութիւն մէջ բազմաթիւ պատկերներով լուստարանեալ: Այս գրքին մէջ հայոց և թրքաց մասին ևս խոսեցու առիթներ ունեցած է հեղինակը: Պ. Փիւնետը հայերուն նայելով ցեղաբանի աչքը՝ կը տեսնէ իր սպասաւորներուն մէջ երեք տարբեր տիպաբանութիւն: Նորոսի, խոհարարը ունի կատարեալ հնդկաւորական տիպար, Արթին և Գեորգ խոշոր սեմական, և Հանի Գեորգ մոնղոլեան տիպար: Եթէ ուշադրութեամբ նայի օր մեր հայկական ժողովներուն, կրնայ դիտաւ տեսնել այդ երեք տիպաբանութիւն ալ օրինակներ: Հրեական տիպարը շատ հազուադէպ չէ մեր մէջ: Եւրօպացի խմբագիր մը, որ Գրիգոր Արծրունին տեսած էր և շատ սքանչացած անոր տաղանդին վրա, կասէր մեզ օր մը թէ նա սեմական տիպար կը կրէր: Սակայն եթէ մանր միտ դնէ օր, պիտի գտնէ հայ սեմական և հրէայ սեմական տիպաբաններուն միջև ալ որոշիչ տարբերութիւն:»

Կ. Պօլսի լրագիրները հաղորդում են, որ շուտով Եջմիածնում կ'սկսուի պիտի ձեռնարկվին թիւրքաւայոց հոգեւորականներից Գեորգ վարդապետ Նրիգեան (որ այժմ Թիֆլիս է), Թէհրանի հայոց փոխանորդ Սահակ վարդապետ Այվաթեան, Թաւրիզի փոխանորդ Գովհանէս վարդապետ Սարաճեան և Բեսարաբիայի թեմի կառավարիչ Գովհի վարդապետ Մեսրոպեան:

Հրաւիրում ենք այն անձանց, որոնց մօտ զբաղւած են հանգուցեալ Գովհանէս խառնի անունով ստիպելու հիմնելու ստորագրու-

թեան թերթները և փողերը, շտապեն թէ թերթները և թէ փողերն ուղարկել, որովհետեւ հանգուցեալութեան ժամանակամիջոցը լրանալու մօտ է, և հաշիւը պէտք է փակվի: Այդ առիթով չենք կարող չը յայտնել մեր դարձանքը, եթէ շտապեց զգուցութիւնը, որ մի այդպիսի համակրելի գործի համար անհանձնելով 4 հազար ռուբլի չնչին գումարը՝ մինչև այժմ դեռ չէ լրացել: Միմիայն Բագու քաղաքը, որ գիտէ հաղաթներ շտապել անմիտ դուրսնութիւնների համար, և ուր կան հանդուգնալի շատ լաւ ճանաչող բազմաթիւ երիտասարդ և ազանովված ինժեներներ և ծառայողներ, կարող էր մի քանի օրում հանգանակել այդ գումարը և այդպիսով իրան վերապահել այդ լաւ գործի պատիւը: Եթէ նա այդ չարաւ մինչև այսօր, գտնէ թող անի այժմ, դեռ ուշ չէ...

Ստացանք Գովհանէս խառնի անունով ստիպելու հիմնելու համար՝ 1) Գահ ձախից, Գովհի Մէլի-Բէգլարեանից 10 ռ: Ուրեմն նախկին 182 ռ. հետ ունենք 192 ռ:

Թիֆլիսի լրագիրները հաղորդում են, որ Շախու թեմի առաջնորդ՝ Կարապետ եպիսկոպոս Այվազեանց վախճանվեց:

Շարաթ օր, յունվարի 10-ին, վեհ. կաթողիկոսը այցելեց Ներսիսեան դպրոցը, և ընդունեց հոգաբարձուներին, ուսուցչական խմբի և աշակերտների կողմից: Հոգաբարձու պ. Գուշարեան ներկայացրեց դպրոցի անոնական հաշիւը, իսկ անուշ պ. Բալաբեան՝ ուսումնական հաշիւը: Հեռանալուց առաջ Հայոց կաթողիկոսը դիմեց Ներսիսեան դպրոցի սաներին մի ձառով յորդոր կարգալով՝ ուսում աւարտելուց յետոյ չը մոռանալ ծնող-ժողովրդին և նորից վերադառնալ դէպի այդ ժողովուրդը:

Ստացանք պրօֆ. Գ. Խալաթեանի հետեւեալ գրքերը. «Два армянства», «Давидъ Са-сунский» և «О некоторых любимейших мотивахъ армянскихъ сказокъ», որոնք արտատրված են «Братская помощь» ժողովա-ծուից: Առաջին գրքովը պարունակում է երկու կենսագրական ակնարկ հանգուցեալ հայազգէտ Մ. Խմբին և Գ. Պատկանանի մասին, երկրորդը՝ «Ստուգելի Գալիլէ» ժողովրդական վէպի թարգմանութիւնն է՝ տեղ-տեղ թղթ, բայց ընդհանրապէս աշող (ի նկատի առնելով գործի զբաւարկութիւնը), երրորդը՝ վերաբերում է հայկական Փօլիօրին և մի հարանցի, բայց շատ հետաքրքիր համեմատական տեսութիւն է մեր և մի քանի ուրիշ հնդկա-եւրօպական ազգերի հեքիաթների հիմնական նիւթերի:

Պետերբուրգի լրագիրները լսել են, որ արդարեւ թաւրութեան և ներքին գործերի մինիստրութիւնների մէջ շուտով պէտք է քննվի, Կովկասի կառավարչապետի մասնակցութեամբ, այն հարցը, թէ ինչ միջոցներ պէտք է ձեռք առնել Կովկասում առաջադրութիւնները արմատախիլ անելու համար:

Փետրվարի սկիզբներին պէտք է Պետերբուրգ ուղևորվի երկազորութեան մինիստրի Կովկասի լիազօր Բ. Մեդվեդեւ, մասնակցելու այն նիստերին, ուր պէտք է քննվին Կովկասի դիւղազինների հողաբաժնութեան ծրագրերը:

Եւպատորիայից, պ. Պօլսի Մէֆեբեան «Մշակի» մի օրինակը նուիրել է Եւպատորիայի հայոց դպրոցին:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Մարինովի օրիորդաց ուսումնական շքանք սանուհիների օգտին տրվեց մի պարբերական և կազմվեց տունածառ: Երկուսն էլ նիւթեպանի կողմից շատ աշող անցան: Հայ սիրողները երկար ժամանակ է ինչ մտադիր են յօգուտ Բաքեգործական ընկերութեան կամ թեմական դպրոցի տալ մի ներկայացուցիչ, բայց մինչև այսօր չէ աշխուրհում: Չը գիտենք դա պէտք է վերաբերել թղթաւորութիւն տա-նալու գծաւորութիւններին, թէ կանանց անտարբերութեան, որոնք հրաժարվում են դերեր ստանձնելու:»

ԱՊՐԱՎԱՐԱՎԱՐՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի վարչութեան անդամները, յիմարեան երեկոյեան «աւետիս» ման եկան ունեւոր քաղաքացիների տները, որից զոյացաւ մօտ 220 ռուբլի: Այդ գումարով պիտի բժշկական օգնութիւն և սնունդ հասցնվի քաղաքի չքաւոր հիւանդներին:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵՆՈՒԹԻՒՆՆԵՐ

«Freie Osm. Post» լրագրում կարդում ենք. «Մի դերմանական լրագրում տպված է, թէ «անգլիացիների կողմից» ջանքեր են լինում որքան կարելի է շատ հայեր կենտրոնացնել Վիպրոս կղզում: Այդ նպատակով Անգլիայում կազմված են երկու մեծ ընկերութիւններ, որոնցից մէկը հաղորդում է հարկաւոր տեղեկութիւններ բնակչութեան մասին, իսկ միւսը ձեռնարկել է Կիպրոսում աշխատանք գտնելու գործին: Վերջին ընկերութիւնը յայտարարում է ինքնաբերական 20,000 հայ, իբրեւ պաշտօնեալ, ինժեներ, արհեստաւոր և մշակ, իսկ միւս կողմից, երեք կամ չորս տարեկան ընթացքում բնակեցնել 50,000 հայեր (գլխաւորապէս ընտանիք) կազմելով հոգաբարձական կօմիտեներ: Այդ կերպով հայկական ազգային զաւթակցութիւնը յայտարարում է մի հայկական յեղափոխական զօրք:»

Չենք կարողանում հաւատաւ ասում է «Freie Osm. Post», որ այդպիսի մի անմիտ լուր տպվել է դերմանական լրագրում: Իրողութիւնն այս է, որ չորս հայ (երկու վաճառական և երկու ուսուցիչ) մի որբանոց են հիմնել Կիպրոսում:

Կ. Պօլսից հաղորդում են «Freie Osm. Post» լրագրին. «Այն լուրը, թէ Արթին փաշայի եղբորդի Տրաւմ ճառեանը ուղարկվել է Եւրօպա կաշառելու հայ յեղափոխականներին, այստեղ, Կ. Պօլսում, մեծ զրոգումով է առաջ բերել Արթին փաշայի դէմ: Դժգոհութիւնը նրա դէմ շատ խիտ է. Արթին փաշան միշտ սեփեթել է հայերի ազգայնական գաղափարներին հետ (hat ko-kettirt) և աշխատել է իրան ժողովրդի բարեկամ ներկայացնել: Այդ պատճառով նա հայերի առաջ ժողովրդական է եղել և հասկանալի է, թէ ինչու երբեք նրան է ընտրել գործեր: Բացի դրանից նոյն պատճառով Եւրօպա է ուղարկվել Պէրայի քաղաքապետ Խալիբ բէյի մի հայ գործա-կալ, փաստաւոր հեղափոխական:»

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻՍԿԻՑ

Պարիզ, յունվարի 8-ին
Արդէն յայտնի է, թէ Գերմանիայի վիլհելմ կայսրը ինչ դեր խաղաց Արեւելեան հարցին մէջ, որը միմիայն գերմանական շահերուն համեմատ լուծելու համար ոչինչ ջանք չը խնայեց: Ամբողջ գերմանական կայսրութեան մասնաձեւերը և ՎԵՂ-խաւոր զբաղմունքը այդ էր: Եւ այսօր մենք դատաւարտված ենք տեսնել Արեւելի փափուկ հարցը այնպէս յօշոտված, թիւրքը գոռաբար ոտքի կեցած, նկենականութեամբ անոր մոլորանք-ընկերական զոհված, իսկ հայերը, թրքական գաւ-ընկ ընդհանրութեան դէմ իւրօր Եւրօպայի ուշադրութիւնը հայցելէն ետք՝ այժմ իրանց մուխի մէջ մուրրած և Եւրօպական ընտիր սկզբունքները այնպիսի անարժանաբար անպատաւած:

Իսկ հիմա որ Քիւս-Չէուի հարուածը և Քիլի մէջ արտասանված յեղափոխիչ ձառեղ լուսնե-ցան, ահա այն քօղը, որ կը ծածկէր 1897 թվականի ամբողջ քաղաքականութիւնը, պատեցաւ և ահա այն ժամանակ միայն Եւրօպան հասկցաւ այն ամեն՝ ինչ որ անխմանալի էր ցնչված և զօր չը կրցար նախատեսել Եւրօպայի ճակատ դիւա-նագէտները, ալ յանկարծակի եկած իրար կանց-նեն:

Այս չփոթմանց մէջ միայն ուսուական դիւա-նագիտական մարմինն էր, որ խոհեմաւ և միան-գամայն դիւրաբարեւ երեւցաւ. այս չարժանե-րէն: Ռուսական նաւաւորումը առանց ժամ մը իսկ վարանելու՝ գրաւեց Պօրթ-Արթիւրը, ուրիկից ապահով կերպով Բէյլիկի ծոցին և Պէլիկի ծովա-յին ճամբուն կը հոկէ: Միայն այս չէ. ուսուական կառավարութիւնը արդէն հարկ եղած մի-ջոցներով իր գերիշխանութիւնը հաստատած է Կօրէյի թերակղզւոյն մէջ, որ իրան համար քա-ղաքական և տնտեսական առաջի կարգի կարեւոր երկիր մըն է: Կրնաք ըսել որ Կօրէյի թագա-ւորութիւնը այսօր իր բոլոր վաճառականական աղբիւրներով և այնպիսի կարեւոր նաւահանգիստ-ներով Ռուսիայի ձեռքին մէջն է: Անգլիան ալ անգործ նստած չէ. նա ալ իր բոլոր այժմ Զի-նաստանի մէջ կենտրոնացուած՝ կուզէ Պէլիկին, Շանք-Հայի և Չօնկ-Բանիկի մէջ հաստատուել աւե-լի հաստատուն կերպով՝ քան երբեք և անշուշտ առիթ պիտի գտնուի՝ որպէս զի աւելի առաջա-նայ Եանկ-Յի-Բեանիկի և Մի-Բեանիկի առաջանե-րուն մէջ:

Այդպիսով քիչ ժամանակէն Գերմանիա պիտի գտնվի բոլորովին կղզիացած և գրեթէ պաշար-

ված Քիւս-Չէուի ծոցին մէջ, թէ և Հէնրի Իշխա-նը աճապարանք Կիլիկի ծովի ճամբան ձեռք ա-ռաւ, սակայն բանը բանէն անցած կարելի է համարել: Եւ այդպիսով թրքաւոր վեհապե-տի այդ խորհուրդը, որուն վրա այնչափ առնել թուխ նստած էր, այսօր պարզ յուսախաբու-թիւն մը պիտի ըլլայ: Այս զգացումը արդէն ծա-ղում առած է Պէրլիկի մէջ և հետհետէ կաճի: Վիլհելմ ուրեմն խաղաղաւ իր այս խնդրին մէջ, որուն այնքան կը ձգտէր ի վնաս ընդհանուր խաղաղութեան: Կի. Սաղեմ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱՎԱՍՏԱՆԻՑ

Ղազին, դեկտեմբերի 29-ին
Կեկտեմբերի 11-ին Միաբովինից Ջիպպատ տանող ճանապարհին երեք գողեր յարձակ-վում են «Սեան» ընկերութեան գործակաւար Յովակիմ Գովհանիսեանի վրա, վիրաւորում են նրան և տանում մօտ եղած փողը, որը, ինչպէս հաստատում է ընկերութեան ներկայացուցիչը, 605 թուման է լինում: Պարսկը այդ փողը տա-նում է եղել Ջիպպատ «առաջ» առնելու հա-մար: Գնդակը ալ կողքը ծակելով անցնում է, առանց կողերի մէջ մտնելու: Քաղաքը լուր հասնելու հետեւալ օրը՝ յայտնեցին դատաւոր Ելին-Սալթանային, որ ներկայ Շահի հօրեղբոր որդին է: Նա «ամառներ» է ուղարկում գործը քննելու: Մամուրները գողերին պիտի պահան-ջեն Կիլիկի-Սուլթանի կողմէ՝ անհաւարութիւնից, որ չըջակալեցի «կարասորանների» մեծն է: Ու մանց ասելով այդ ոճիւր կատարվել է նրա թե-լադրութեան:

Ներկայ դատաւորի թուրքական պատճառով քաղաքը շատ խառն դրութեան մէջ է գտնվում: Վերջերս, մի աղբիւրիկ սիւրբ դատաւորի տան մէջ համարձակվում է ծեծել նրա «Փարաշա-րաւ», առանց պատժվելու վախկոտ դատաւորից: Դատաւորը ուժգնորէն հետ գործ կ'անի, նրա գործը թոյլերի հետ է: Հետեւալ դէպքը դրան իրրկ ապացոյց կարող է ծառայել: Ղազինի ընկի հայերը, թուր 17 տուն, պարապում են գինեկաճառութեամբ: Վերջին օրերս դատաւորի հրամանով բոլոր գինեկաճառների կարանները կնքվում են, որպէս զի իսլամի հպատակները ողբից ըմպելիներ չը գործածեն (չը նայելով որ ինքը լաւ կոնձիլ գիտէ): Կինեկաճառները դի-մում են թումանեանց առեւտրական տան այս-տեղի ներկայացուցչին, որը մօտ յարաբերութեան մէջ է դատաւորի հետ, և խնդրում, որ իրանց «Փարաշաների» ճանկերից ազատի: Պարսկը դի-նեկաճառներից հանդանակում է 20 թուման և ուղարկելով դատաւորին խնդրում է, որ կարաս-ների կնիքները քանդեն: Պարսկը դաժանորէ չը-նորհիւ՝ մի ժամկէ մէջ բոլոր կնիքները քանդ-վում են և ողբից ըմպելիների ծախվելը շա-րունակվում է: Կ. Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՐԻՐԻ

—Լամի Զօլա հետեւալ նամակն է գրել «Ռուս-նոյնների ընդհանուր ընկերութեան» մասնաժո-ղովին, որը նամակով դիմել էր նրան ուսանող-ների կողմից և դարձաւ յայտնի, որ Զօլա վիրաւորում է Քիւսիական գողերի պատիւը:

Դիմելով եւմ ձեռք հաղորդել ուսանողական ընկե-րութեան, որ ինձ դարձնում է իմ հասցէին ուղ-ղած նամակի օճը: Եթէ ևս յարձակված լինէի զօրքի վրա, հատկանալի կը լինէր ուսանողների մեղով-մուծը: Բայց ես չեմ յարձակվել զօրքի վրա, իմ ա-ռաջ բերած փաստերը անհերքելի են: Ընդհանու-րապէս, ես արտայայտել եմ իմ ամբողջ զննչութիւնն և ամբողջ յարգանքս դէպի նա: Ցանկալ լոյս գցել զօրքի պատիւը արտաստորջ մը քանի գլխաւորները գործողութեան վրա, ամենեւն չէ նշանակում յար-ձակվել զօրքի վրա: Գործի մէջ շահ առնելու մար-դիկ խոստնելով այդ գլխաւորներին Քիւսիական ընկերութեան հետ, գիտնում են մի այնպիսի գրեւելի միջոց, որ գործ է գրվում ճշմարտութեան և ար-դարութեան թաղանթում: Համար, իմ սերտ կեց-վում է ցաւեղ, տեսնելով, որ երեսաստորութեան ընկել է այդ թաղանթի մէջ: Արեւելի գլխաւորն է լինի սպառնալով: Եթէ Զօլա

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՀՈՒՍՄ 9 յունվարի: Մաշկատում և Անիկա-լիում ազգաբնակչութիւնը ցրցը արաւ քաղաքա-յին խորհրդարանի առջև, պահանջելով հայի գնի պակասեցնելը:

Կ. ՊՈԼԻՍ 9 յունվարի: Լուր է պտտում, որ գնեւոր Լէկիկի կը նշանակվի մեծ վիզիր: Չէյն Արդուլօլուսեօ—չէյնուլ-իւլաւ, իրաւական կա-րէնէտի հրամանատար Շաքիր—գլխաւորական մի-նիստը, Հէյասի ընդհանուր-նախագահաւ Բա-տիր—ծովային մինիստը:

ԲԵՐԼԻՆ 9 յունվարի: Պատգամաւորների ժո-ղովը յանձնաժողովին յանձնեց կրկին 100 մի-

